

Թիւ 25988  
Օգոստոս 15, 1978

Մեծայարգ  
Տոբթ. Վարդան Այնաճեան  
Թորոնթօ.

Յարգելի Տիթթ. Այնաճեան,

Թորոնթոյի մեր համայնքին մէջ երկրորդ ծուխ մը հաստատե-  
լու աշխատանքներու կապակցութեամբ՝ հրահանգած ենք որ Առաջ-  
նորդի Փոխանորդ եւ Թեմական Խորհուրդի փոխ-գանձապահ Հոգշ.  
Տ. Յուսիկ Ծ. Վրդ. Պաղտասեանի նախագահութեամբ խորհրդակցա-  
կան ժողով մը գումարուի Երեքշաբթի Օգոստոս 29, 1978, երե-  
կոյեան ժամը 8.00ին՝ Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
սրահին մէջ: Սոյն ժողովին հրաւիրած ենք Եկեղեցւոյ ժխական  
Խորհուրդը եւ համայնքիս օգտաշատ ազգայիններէն մի քանի ան-  
ձեր:

Այսու գիրով կը հրաւիրենք ձեզ մասնակցելու սոյն ժողովին,  
որուն գլխաւոր օրակարգը պիտի ըլլայ ծրագրումը օրինական այն  
քայլերուն որոնք պիտի առնուին Առաջնորդի եւ Թեմական Խոր-  
հուրդի հաւանութեամբ, կազմակերպելու համար երկրորդ ծուխ  
մը Թորոնթոյի մեր համայնքին մէջ:

Կը յուսանք որ նկատի ունենալով վերոյիշեալ թուականը ներ-  
կայ կը գտնուիք ժողովին, ձեր օգտակար թելադրութիւնները բե-  
րելու խորհրդակցութեանց:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ